**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 08.4/2033-2025

«____»____________2025 թ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր՝ 2025 թվականի հունվարի 29-ի N 1389545 գրության՝ ներկայացնում ենք հարցման պատասխանները:

***1. 2024 թվականի ընթացքում նախարարությունը ո՞ր կազմակերպություններին և անհատներին է տրամադրել դրամաշնորհներ և/կամ սուբսիդիաներ: Խնդրում ենք տրամադրել դրամաշնորհ ստացած բոլոր անձանց և կազմակերպությունների անվանական ցանկը:***

2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի իրականացման համար նախատեսվող միջոցառումների շրջանակներում հայտարարված մրցույթներում հաղթող տնտեսվարող սուբյեկտների ցանկը տեղադրված է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կայքէջում՝ հետևյալ հղումով՝ https://mineconomy.am/media/32130/2024-tenders.pdf :

***2. 2024 թվականի ընթացքում հատկացված յուրաքանչյուր դրամաշնորհի/սուբսիդիայի նպատակը, տևողությունը ու հատկացված գումարի չափը:***

Նշված տեղեկատվությունը ևս կարող եք տեսնել՝ անցնելով վերը նշված հղումով:

***3. Դրամաշնորհների հատկացման վերաբերյալ հայտարարությունները, մրցույթի հրավերների հրապարակման հարթակները, առկայության դեպքում՝ ակտիվ հղումները:***

2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով հայտարարված դրամաշնորհային մրցույթների հայտարարությունները հրապարակվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարության կայքէջի «Հայտարարություններ» հատվածում՝ https://mineconomy.am/section/123, ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեի ֆեյսբուքյան էջում՝ https://www.facebook.com/ArmeniaTourismCommittee, ինչպես նաև www.armeps.am էլեկտրոնային համակարգում (ինչպես օրինակ՝ *Դրամաշնորհային մրցույթներ՝*
*«Միջազգային կապերի զարգացման նպատակով միջոցառումների կազմակերպում»*

- https://www.facebook.com/photo/?fbid=841519781355813&set=a.252607433580387
- https://armeps.am/epps/cft/prepareViewCfTWS.do?resourceId=10455560&fbclid=IwY2xjawIOgqVIeHRuA2FlbQIxMAABHRQjgO3B055_vAEKQ5ALPZJiEPdzH8KGGWekXGxfoRUR2eOXrbUWurU4Kg_aem_vHb0gEmXrNGUBucDuchwtQ
- https://armeps.am/epps/cft/listContractDocuments.do?resourceId=10455560

*«Ճանաչողական այցերի կազմակերպում»*

- https://www.facebook.com/photo/?fbid=851067273734397&set=a.252607433580387
- https://www.armeps.am/epps/cft/prepareViewCfTWS.do?resourceId=10505296&fbclid=IwY2xjawIOgypleHRuA2FlbQIxMAABHaU8rU_PdE4mW3Y-4sM-6Wdthqj1PI30KTiSBD4Bth0MLPRM38VhsfXB5g_aem_CB2rYhSrifBiScxThBiTRQ
- https://www.armeps.am/epps/cft/listContractDocuments.do?resourceId=10505296 ):

***4. Յուրաքանչյուր մրցույթի օրվա, մասնակիցների քանակի ու մրցութային հանձնաժողովի որոշումների պատճենները և դրանց հրապարակման ակտիվ հղումները:***

ՀՀ էկոնոմիկայի նախարարության կայքէջում հրապարակված մրցույթների հայտարարությունների տակ տեղադրվել են նաև արձանագրությունները, ինչպես օրինակ՝ *https://mineconomy.am/page/2958*, *https://mineconomy.am/page/3017* **:**

Տեղեկացնում ենք նաև, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող պետական աջակցության ծրագրերի ընթացակարգերում մրցութային կարգով դրամաշնորհների/և կամ սուբսիդիաների տրամադրում նախատեսված չէ:

Հարգանքով՝

X________________________

ՀԱՅԿԱԶ ՆԱՍԻԲՅԱՆ

Կատարող՝ Լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ, Անժելինա Չիլինգարյան, +37411597211